ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Կազմակերպության անունը: «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ

2. Դրամաշնորհի տեսակը: Ենթադրամաշնորհ

3. Պայմանագրի համարը: SG-52800082-08014

4. Ծրագրի անունը: «Արարման առաքելությունը»

5. Ծրագրի տևողությունը: 01.08.2016 մինչև **31.10.2016**

6. Ծրագրի իրականացման վայրը: Մարզ Գեղարքունիք

Համայնք(ներ)

- Գավառ /ներառյալՀացառատնԱրծվաքարթաղամասերը/
-Գանձակ
-Գեղարքունիք
-Ծաղկաշեն
-Կարմիրգյուղ
-Լանջաղբյուր
-Լճափ
-Հայրավանք-Բերդկունք
-Ծովազարդ
-Նորատուս

8. Ներկայացման ամսաթիվը: 11.11.2016

I. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (մոտ 2 էջ):

Հաշվետվության ժամանակահատվածում իրականացված գործողությունների վերլուծական նկարագիր, որը ներկայացնում է ձեռք բերված առաջընթացը՝ համաձայն առաջադրված նպատակների և ակնկալվող արդունքների:

2016թ. օգոստոսի 1-ից Գավառի տարածաշրջանում մեկնարկել է «Արարման առաքելությունը» ծրագիրը, որը նպատակ ունի նպաստել Գավառի տարածաշրջանումկանանց և աղջիկների նկատմամբ խտրական վերաբերմունքի փոփոխմանը, պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելմանը, ընտանիքում և հասարակության մեջ սեռով պայմանավորված անհավասարությունների նվազեցմանը:

Ծրագիրն իրականացվել է ըստ ծրագրային հայտում ներկայացված խնդիրների և ժամանակացույցի, այն է.

- անցկացվել է եռօրյա ուսուցողական դասընթացներ Գավառի տարածաշրջանի 11 համայնքներից արդեն ընտրված 13 ուսուցանողների համար՝ հիմնախնդրի և ծրագրի նպատակների հետ կապված, որին մասնակցել է նաև Գավառի հիվանդանոցի ուլտրաձայնային հետազոտություն իրականացնող բժշկուհին, ով արդեն վերապատրաստվել էր «Պտղի սեռի խտրական տնտրության դեմ պայքարի» պետական ծրագրով:

Դասընթացներնիրականացրել են ծրագրի ղեկավարը և համակարգողը, ովքեր «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդատումների» պետական ծրագրի Գավառի ֆասիլիտատորներն են:Դասընթացների ընթացքում մասնակիցներն ապահովվել են բոլոր անհրաժեշտ ուսուցողական նյութերով, ֆիլմերով, բուկլետներով, ստեղծվելէ 13 ակտիվ

ուսուցանողներից կազմված խումբ, ովքեր իրենց համայնքներում կազմակերպել և անցկացրել են տարբեր ֆոկուս խմբերի հետ հանդիպումներ:
Այս դասընթացների նպատակն էր վերապատրաստել համայնքներից այն 13 հոգուն, ովքեր ունեն այնպիսի հմտություններ, որ կարողանան տարբեր ոլորտների լսարան կառավարել, նաև իրենց համայնքներում հեղինակություն ունեն, հարգանք են վայելում:

Հենց դասընթացների հաջորդ օրը, երբ արդեն ստորագրվել էին պայմանագրերը ուսուցանողների հետ, վերապատրաստված ուսուցանողներն անցել են ակտիվ գործողությունների.
- նրանց կողմից անցկանացվել են ընդհանուր թվով 66 համայնքային հանդիպումներ տարբեր ֆոկուս խմբերի հետ /ուսուցիչներ, ծնողներ, տատիկ-պապիկներ, հղիներ, բուժ ամբուլատորիաների աշխատակիցներ, ուսանողներ/:

- Գավառ -16 հանդիպում՝ ներառյալ Արծվաքար և Հացառատ թաղամասերը

- Գանձակ-5 հանդիպում

- *Սարուխան-5 հանդիպում*

- *Լանջաղբյուր -5 հանդիպում*

- *Գեղարքունիք-5 հանդիպում*

- Կարմիրգյուղ-5 հանդիպում



- Հայրավանք -5 հանդիպում

- Ծովազարդ-5 հանդիպում

-Նորատուս-5 հանդիպում

- Ծաղկաշեն-5 հանդիպում

- Լճափ – 5 հանդիպում

Հանդիպումներն անցկացվել են դպրոցներում, մանկապարտեզներում, բուժ. հաստատություններում, գրադարաններում, արվեստի և երաժշտական դպրոցներում: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 1000 բնակիչներ՝ տատիկներ, պապիկներ, երիտասարդներ, երիտասարդ ընտանիքներ, հոիներ՝ հիմնախնդրի վերաբերյալ իրազեկումը բարձրացնելու և հիմնախնդրի հանդեպ վերաբերմունք փոխելու համար:

Համայնքներում դասընթացներին մասնակցել է նաև ծրագրի ղեկավարը, օգնել, օժանդակել թե ուսուցանողներին և թե իրականացված միջոցառումներին:

- ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծված Արարման առաքելությունը խումբը ակտիվ գործել է, որտեղ ներառված են բոլոր ուսուցանողները, նրանք էլ իրենց հերթին համայնքների ակտիվ անդամներին են ներառել, այս պահի դրությամբ արդեն 115 անդամ կա խմբում, որն օրեցօր ավելանում է:
Խմբում տեղադրվել է տեղեկատվություն ծրագրի ողջ ընթացքի մասին, ծավալել քննարկումներ:

https://web.facebook.com/photo.php?fbid=1279011572133508&set=gm.581169198731054&type=3&theater

- Յուրաքանչյուր համայնքային հանդիպումից հետո ծրագրի ղեկավարը կամ համակարգողը կապի մեջ են եղել ուսուցանողների հետ, որպեսզի քննարկեն ծրագրի ընթացքը, դժվարությունները և տվել նոր ու լրացուցիչ տեղեկատվություն հետագա աշխատանքների համար:
Ծրագրի ընթացքում 3 անգամ տեղի է ունեցել հանդիպում ուսուցանողների հետ

- Պատրաստվել և իրականացվել է ցուցահանդես Գավառի Արվեստի դպրոցում «Ընտանիք, մայրություն, գեղեցկություն» խորագրով, ներգրավելով արդեն երեխաներին, ովքեր ապագա ծնողներ են:

- ներկայացվել է նաև արվեստի դպրոցներում նկարված նկարների ցուցադրություն Գավառի Արվեստի դպրոցում, մնացած համայնքների արվեստի դպրոցների երեխաների նկարները ցուցադրվել են ծրագրի փակման առիթով կազմակերպված հանդիպմանը, որտեղ ներկայացվել են նաև լուսանկարների ցուցահանդեսը:



- հանդիպումներից մի քանիսը, այդ թվում ուսուցանվողների դասընթացները նկարահանվել է Գեղամա TV մարզային հեռուստատեսության կողմից՝ ծրագրի ավարտին ծրագրի մասին պատրաստված տեսանյութը՝ նախատեսված 5 րոպեի փոխարեն 13 րոպեանոց, ցուցադրելվել է 5 անգամ, նշենք որ Գեղամա հեռուստատեսությունը մարզային է, և ծածկույթն էլ ամբողջ մարզի տարածքն է ընդգրկում :

- Հայտարարվել է ֆոտոցուցահանդես, ուսուցանվողների կողմից յուրաքանչյուր համայնքից, հենց համայնքի բնակիչների մասնակցությամբ, ընտրվել են ընտանեկան լուսանկարներ, որտեղ

ներկայացված են երջանիկ ընտանիքների պատկերներ և որտեղ երեխաների սեռերի խտրականություն չկա:
- իրականացվել է ընդհանուր նախատեսված 40-ի փոխարեն թվով 67 լուսանկարների ցուցահանդես, ներգրավելով տարածքային կառավարման, ՏԻՄ, համայնքային տարբեր կազմակերպությունների, ԶԼՄ-ի, մասնակից համայնքների ներկայացուցիչների

- ցուցահանդեսի ժամանակ իրականացնել նաև ծրագրի փակման արարողություն, որին մասնակցել են բոլոր շահագրգիռ կողմերը՝ մարզպետարանի, քաղաքապետարանի, ՀԿ-ի, կրթական հաստատությունների, բուժ հիմնարկների, ԶԼՄ-ի ներկայացուցիչներ և Գավառի տարածաշրջանի բնակիչներ:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (1/2 էջ):

Հաշվետվության ժամանակահատվածում իրականացված գործողությունների արդյունքում ձեռք բերված դրական փոփոխությունների նկարագրություն անհատների, համայնքների կամ կազմակերպությունների կյանքում: Նկարագրեք հստակ արդյունքները և միջոցառումները, որոնք հանգեցրել են փոփոխությունների:

Ծրագրի արդյունքում պլանավորված էր ունենալ՝
- 10% դրական փոփոխություն՝ բնակչության գիտելիքների, վերաբերմունքի և ընկալման մեջ
- Առնվազն 10 % կրճատում՝ հղիության արհեստական ընդհատումների

Ծրագրի արդյունքում Գավառի տարածաշրջանի 11 համայնքներում իրականացվել են 66 հանդիպում՝ 1003 մասնակիցներով, որից 979 կին, 24 տղամարդ, 47 բուժ աշխատող/բժիշկներ, բուժ քույրեր/, 100 տատիկ, 2 պապիկ, 30 ուսանող:
Պետք է խոստովանել, որ հանդիպումների սկզբում հնչում էին տարակարծություններ, որ ծրագրով բարձրացրած խնդիրները հիմնականում պայմանավորված են մարդկանց սոցիալական

վիճակի հետ, սակայն լսելով հստակ փաստերի, վերլուծությունների մասին 66 հանդիպումներից և ոչ մեկի ժամանակ չի եղել գոնե մեկ դեպք, երբ մարդիք չհամաձայնվեն, որ խնդիրն առկա է, և որ հետևանքներն անդառնալի կարող էին լինել, եթե չսկսվեր Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի ծրագիրը, չի եղել գոնե մեկ դեպք, որ ծրագրի մասնակիցներն անհամաձայնություն հայտնեն ծրագրի ոչ կարևոր լինելու հետ կապված:

Բոլոր ֆոկուս խմբերի հետ հանդիպումներն անցնում էին անկաշկանդ մթնոլորտում, մասնակիցները ծավալում էին ակտիվ քննարկումներ բարձրացված հարցերի շուրջ, նաև ներկայացնում էին և իրենց պատմությունները և հարևանի և բարեկամի պատմությունը: Հանդիպումների ժամանակ մարդկանց վերաբերմունքն ու տրամադրվածությունը շատ դրական է եղել, նամանավանդ դասընթացների վերջում, քանի որ համարյա յուրաքանչյուր մասնակից իր իրականությունն ուներ:
Հերթական հանդիպումների ժամանակ նոր խմբերը ավելի հաճույքով են մասնակցել, քանի որ արդեն իրազեկված էին նախորդ խմբերի անդամներից, թե ինչի մասին է լինելու հանդիպումները, չէին բանավիճում, այլ պարզ պատկերացնելով վաղվա օրը, իրոք հայտնում էին իրենց անկեղծ մտահոգությունը և աջակցությունը նաև ծրագրի ավարտից հետո:
Նշեմ, որ և ծրագրի ընթացքում և ծրագրի ավարտից հետո /քանի որ կապը պահպանվում է ծրագրի մասնակիցների հետ/, և նրանք համարյա թե ամեն օր փաստում են, որ փրկել են մեկ աղջկա կյանք:

Մասնակիցների մեջ կային նաև երիտասարդ մայրիկներ, ովքեր տվյալ պահի թելադրանքով խոստացան անպայման ունենալ աղջիկ երեխա և կատակով ավելացրեցին. «Մենակ թող ամուսինս խոպանից տուն հասնի»:

Համայնքային հանդիպումներից մեկին մասնակցող Շուշանը գերազանց ավարտել էր ԵՊՀ-ի «Միջազգային հարբերություններ» բաժինը, բայց իր գերազանցության դիպլոմը համարում էր իր երեք աղջիկները:

Հուսանք, որ Արարման Առաքելությունը ծրագրի արդյունքները դեռ 3 ամսական սաղմնային վիճակում են, և առնվազն 6 ամիս հետո մենք կքաղենք մեր ծրագրի իրական պտուղները:

III. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ /ՔԱՂԱԾ ԴԱՍԵՐԸ (1/2-1 էջ):

Հաշվետվության ժամանակահատվածում առաջ եկած մարտահրավերների ներկայացում և դրանց հաղթահարում: Սրանք կարող են ներառել կարևոր քաղաքական զարգացումներ, փոփոխություններ ազգային կամ տեղական կառավարությունում, մեթոդական դժվարություններ և համապատասխան միջոցառումներ, որոնք ազդեցություն ունեցան ծրագրի ընդհանուր իրականացման վրա:
Նկարագրեք, թե ինչը լավ աշխատեց, ինչը՝ ոչ, թե ինչ մոտեցումներ, մեթոդներ և գործիքներ օգնեցին հասնել ծրագրի նպատակներին և ինչո՞ւ: Ի՞նչն էր անարդյունավետ, և ինչո՞ւ:

Ծրագրի ողջ ընթացքում կարելի է ասել ոչ մի խոչնդոտ չի եղել: Ուղղակի որպես կանոն, ամեն միջոցառման սկզբից բոլոր մասնակիցների մոտ կարելի է ասել թերհավատություն կար լսելիք թեմայի հետ կապված, դա նաև ակնհայտ էր ուսուցանվողների մոտ, քանի որ կասկածելով էին բոլորն էլ համաձայնվել մասնակցելու ծրագրին, բայց յուրաքանչյուր միջոցառման ավարտին ոչ մեկը չէր ցանկանում տուն գնալ, մասնակիցները պատմում էին ամեն մեկն իր կյանքից, բարեկամի, ծանոթի և այլնի մասին:

Ոչ մի ավելորդ գործիք, մեթոդ կամ մոտեցում չի կիրառվել լսարանը պահելու համար, ուղղակի ծրագրային թիմը եղել է շատ տեղեկացված, տրամադրել է ճիշտ տեղեկատվություն և հիմնականում աշխատել է կյանքի իրական օրինակների վրա ներկայացրած պատմությունները ներկայացնել, քանի որ մարդիք այդ կերպ ամեն մեկն իրեն է փորձել տեսնել այդ դերում:

Որպես խոչնդոտ համարում ենք այն, որ տղամարդկանց թիվը քիչ էր ծրագրին մասնակցություն ունենալու, համայնքային հանդիպումներին մասնակցության առումով: Այն մի քանի պատճառ ուներ, նախ որ բերքահավաքի ժամանակ էր, և տղամարդիք դաշտերում էին, կամ երկրից դուրս՝ վաստակելու իրենց հանապազօրյա հացը, իսկ նրանք ովքեր տեղում էին, ոչ բոլորը կարողացան իրենց մեջ կոտրել այն կարծրատիպը, որ ինչ որ կանայք կարող են իրենց ինչ որ բան սովորեցնել: Բայց հավատացած ենք, որ այն հարսները, աղջիկները, տատիկները, ովքեր մասնակցություն են ունեցել դասընթացներին, վստահաբար կարող են ազդեցություն ունենալ:

IV.ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ: (1 / 2 էջ)

Կատարողականի ցուցանիշների հաշվետվություն (համաձայն դրամաշնորհի պայմանագրի): Ներկայացրեք արդյունքների ցուցանիշը՝ որպես իրագործված, գերազանցված կամ չիրագործված: Բացատրեք, թե ինչպես իրագործվեցին նպատակները և/կամ ինչու չիրագործվեցին: Կցեք օժանդակող տվյալներ և մոնիտորինգի ու գնահատման գործիքներ:

Ծրագրած նպատակները	Ձեռք բերված նպատակները	Կարգավիճակը (իրագործված /գերազանցված /չիրագործված)	Բացատրություն
Նպաստել Գավառի տարածաշրջանում կանանց և աղջիկների նկատմամբ խտրական վերաբերմունքի փոփոխմանը, պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելմանը, ընտանիքում և հասարակության մեջ սեռով պայմանավորված անհավասարությունների նվազեցմանը	Արդյունք 1. Հանրության, տեղական կառույցների և ՏԻՄ-երի գիտելիքների և հմտությունների հզորացում	իրագործված	
	Արդյունք 2. Բնակչության ընկալումների, կարծրատիպերի, վարքագծի, աղջիկների և կանանց նկատմամբ հայաստանյան հասարակության վերաբերմունքի դրական փոփոխություն	իրագործված /նաև որոշ չափով գերազանցված,	քանի որ մասնակիցների թիվն էր մեծ, նաև նախատեսված 5 րոպեանոց տեսանյութի փոխարեն եթեր է գնացել 13 րոպեանոց տեսանյութ, որը հեռարձակվել է Գեղամա հեռուստատեսությամբ, իսկ ծածկույթն ամբողջ մարզն է:
	Արդյունք 3. Հղիների շահերի պաշտպանություն	իրագործված	Հանդիպումներն իրականացվել են նաև համայնքների բուժ

			ամբուլատորիաներում՝ հղիների և իրենց ամուսինների մասնակցությամբ

Արարման առաքելություն» ծրագիրն իրականացվում է «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության հասարակական կազմակերպությունը «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ շարունակում է «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և որն իրականացվում է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության (ՄԶՄԿ) «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի (ԱԶԿ), «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի (ՄԿՀԽ) հետ համագործակցությամբ:

Հաստատված է դրամաշնորհառուի կողմից:

Անուն: _____Լիաննա Ասոյան_____Պաշտոն.ՀԿ նախագահ, ծրագրի ղեկավար

Ստորագրություն: Ամսաթիվ: 11.11.2016

Հաստատված է Սեյվ դը Չիլդրեն-ի կողմից:

Անուն: _____ պաշտոն. _____

Ստորագրություն: Ամսաթիվ(օր-ամիս-տարի) _____